Ինչպես Կարող Է Սոցիալական Ապահովությունը Ձեզ Օգնել Ընտանիքի Անդամի Մահվան Դեպքում

Անձի մը մահը անմիջապէս տեղեկացուցէք Սոցիալական Ապահովության: Շատ դեպքերում, թաղման գրասենյակի ղեկավարը փոխանցում է անձի մը մահվան լուռը Սոցիալ Ապահովության եթե նրան հայթայթէք մահացողի Սոցիալական Ապահովության համարը:

Մահացողի ընտանիքի որոշ անդամներ կարող են ստանալ Սոցիալական Ապահովության նպաստներ, եթե մահացած անձը նպաստներ ստանալու համար բավականաչափ երկար աշխատել էր Սոցիալական Ապահովության օրէնքների համեմատ: ***Դուք պետք է անմիջապէս կապվեք Սոցիալական Ապահովության հետ, որպեսզի ընտանիքի անդամները արագօրէն ստանան բոլոր իրավասու նպաստները:*** Խնդրվում է ուշադրությամբ կարդալ հետեւյալ տեղեկատվությունը՝ հասկնալու թե ինչպիսի նպաստներ կարող են ստացվել:

- Մեռնողի վերապրող ամուսինը կամ կինը կարող է ստանալ մի անգամ 255 դոլար եթե նա ապրում էր մահացողի հետ մահէն առաջ: Եթե վերապրող անձը բաժնված ապրել է, կրկին կարող է ստանալ այս գումարը եթե մահացողի աշխատանքի տվյալներով ստացել է Սոցիալական Ապահովության նպաստներ: Եթե չկա վերապրող ամուսին կամ կին, վճարումը կատարվում է երեխային, որ իրավասու է մահվան ամսին մահացողի տվյալներով նպաստներ ստանալու համար:
- Որոշ ընտանիքի անդամներ **կարող են իրավասու լինել** ամսական նպաստներ ստանալու, ներառյալ.
  - Այրի կին կամ ամուսին որ 60 տարեկան է կամ ավելի: Եթե նա հաշմանդամ է, 50 տարեկանում կարող է ստանալ նոյն նպաստը.
  - Որեւէ տարիքի վերապրող ամուսին կամ կին որ խնամում է մահացողի հաշմանդամ երեխային կամ մինչեւ երեխայի 16-րդ տարեդարձը.
  - Մահացողի ամուրի երեխան, որը.
    - 18 տարեկանից երիտասարդ է, 18-ից 19 տարեկան է բայց տակաւին հաճախումէ երկրորդական վարժարան. կամ
    - Եթե 18 տարեկանից ավելի է , սակայն 22 տարեկանից առաջ հաշմանդամ է եղել.
  - Ծնողներ, որոնք 62 եւ ավելի տարեկան են, որոնց ապրուստի առնվազն կեսը մահացողը խնամում էր, ինչպես նաեւ
  - Վերապրող ամուսնալուծված ամուսին կամ կին ՝ որոշակի հանգամանքներում:

Եթե մահացողը ստանում էր Սոցիալական Ապահովության նպաստներ, դուք պետք է վերադարձնեք մահվան ամսվա եւ բոլոր հաջորդող ամիսների համար ստացված նպաստը: Օրինակ, եթե անձը մահանում է Յուլիսին, դուք պետք է վերադարձնեք Օգոստոսին վճարված նպաստը: Եթե նպաստը ուղղակի ուղարկվում էր դրամատուն, դիմեք դրամատան եւ խնդրեցեք որ մահվան ամսվա համար կամ ավելի ուշ ստացված բոլոր նպաստները վերադարձնեն Սոցիալական Ապահովությանը: Եթե նպաստները վճարվել են թղթի վճարագրով (չեկ), մի մանտրէք կամ գործածեք մահվան ամսվա համար կամ ավելի ուշ ստացված վճարագիրները: Շտապ վերադարձրեք վճարագիրները Սոցիալական Ապահովության գրասենյակը:

Միեւնույն ժամանակ, ընտանիքի իրավասու անդամները կարող են ստանալ մահվան նպաստներ նոյն ամսվա համար, որուն մէջ նպաստառուն մահացել է:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՝կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10008-AM
How Social Security Can Help You When A Family Member Dies (Armenian)
September 2004